

**ԼՈՌՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԵՎ ՀԱՊՀ ՎԱՆԱՁՈՐԻ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

Հայաստանի Հանրապետությունում կրթական համակարգը պահանջում է մի շարք խնդիրների լուծում, որոնցից ամենակարևորը կրթության որակի բարելավումն է: Այս որոշումը մեծապես կախված է կրթական, հետազոտական և դաստիարակչական գործընթացներից:

Ինտեգրացիոն մոտեցումը պետք է ապահովի ուսանողների ժամանակակից գիտելիքների տիրապետում, մասնագիտական հմտություններ և կարողություններ՝ գործնական խնդիրների լուծման համար, ինչպես նաև ուսումնական հաստատությունների շրջանավարտներից պահանջվում է նոր մասնագիտական մտածողություն, բարձր շարժունակություն, թիմային գործունեություն:

Ճարտարագիտական համալսարանը գտնվում է ընդհանուր կրթական բարեփոխումների և Եվրոպական կրթական տարածքին ինտեգրվելու Բոլոնյան գործընթացի մեջ: Ըստ այդմ, ՎՄ-ը ևս խնդիր ուներ համապատասխանեցնելու կրթական որակները եվրոպական չափանիշներին, աշխատաշուկայի պահանջներին ու կարիքներին համապատասխան, ինչպես նաև ժողովրդավարական հասարակության ակտիվ դիրքորոշում ունեցող քաղաքացիների կրթման, գիտելիքների առաջատար և լայն հենքի ձևավորման անհրաժեշտության առումով: ՀՊՀՀ ՎՄ-ը 1999թ.-ից ներգրավվեց մայր համալսարանի բարեփոխումային ծրագրերի շրջանակներում. մասնաճյուղում հաջորդաբար ստեղծվում են համալսարան-արդյունաբերություն փոխկապակցության, ուսանողական կարիերայի կենտրոններ:

Վերջին տարիներին ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղում փորձեր են արվում տարբեր կուրսերի ուսանողների ներգրավմամբ թիմային աշխատանքներ կատարելու, ներառյալ՝ ձեռնարկությունների կողմից մասնաճյուղին առաջարկված թեմաների հետ կապված: Թիմերում ներգրավված ուսանողները հնարավորություն ունեն ներկայացնել իրենց կատարած աշխատանքների որոշակի հատված՝ որպես ավարտական աշխատանք կամ մագիստրական թեզ: Ի դեպ, թիմային աշխատանքի արդյունքները պարբերաբար գեկուցվել են ուսանողական գիտաժողովներում, հետագայում այդ արդյունքների մի մասը ներկայացվել են որպես գիտական հոդվածներ, հրատարակվել տարբեր գիտական ժողովածուներում:

Վանաձորի «Ավտոգեն-Մ» ՍՊԸ-ի կողմից մասնաճյուղին առաջարկվում է ուսումնասիրել գործարանի կողմից թողարկվող արտադրանքի որակի խնդիրները: Թեման ամբիոնի կողմից հանձնարարվում է ամբիոնի դոցենտ Մ. Նաջարյանին և «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում մեքենաշինության ճյուղում» մասնագիտությամբ սովորող երրորդ կուրսի ուսանողուհի **Աննա Եղոյանին**:

Թեմայի կատարման ընթացքում ուսանողուհին ղեկավարի հետ բազմիցս այցելել է «Ավտոգեն-Մ» գործարան, տեղում ծանոթացել խնդրին, հանդիպել գործա-

քանի առաջավոր մասնագետների հետ, հավաքել է անհրաժեշտ տվյալներ, որոնք հնարավորություն են տվել նրան լուծելու առաջադրված խնդիրները:

Վանաձորի «Ավտոգեն-Մ» ՍՊԸ

**«Մայակ-2-01» БАГ 2016.00.00
գազակտրիչի հավաքման
արտադրամաս**



«Ավտոգեն -Մ» գործարան: Հավաքման արտադրամաս

Կատարվել է Վանաձորի «Ավտոգեն-Մ» գործարանում «Մայակ-2-01» գազակտրիչի արտադրման տեխնոլոգիական գործընթացի վերլուծությունը: Որակի վերահսկման վիճակագրական մոդելի կիրառմամբ պարզվել է, որ տեխնոլոգիական այդ գործընթացը չի ապահովում անհրաժեշտ ճշտությունը: Բացահայտվել են որակի վրա ազդող գործոնները և տրվել այդ ամենի քանակական ու որակական գնահատականը:

Վանաձորի «Ավտոգեն-Մ» գործարանին առաջարկվել է վերանայել բացահայտված գործոններից յուրաքանչյուրի ազդեցությունը իլի տրամագծի (Ø7) ճշտության վրա: Ուսումնասիրման արդյունքում գործարանին առաջարկվել է անճշտությունների շտկման ու կանխարգելման միջոցառումներ՝ ապահովելու համար արտադրանքի պահանջվող որակը:

Ուսումնասիրման արդյունքները ուսանողուհին զեկուցել է մասնաճյուղի 2013թ., 2014թ. ուսանողական գիտական տարեկան գիտաժողովների լիագումար նիստերում, այնուհետև հետազոտման արդյունքները հրատարակել է 2 գիտական հոդվածներ տարբեր գիտական ամսագրերում: Հետազոտման նյութը **Աննա Եղոյանը** 4-րդ կուրսում բակալավրի կրթական ծրագրով



**Ուսանողուհի Աննա Եղոյանի զեկույցը
ՈԻԳ համաժողովի լիագումար նիստում, 2013թ.**

ներկայացրել է որպես դիպլոմային աշխատանք և հաջողությամբ պաշտպանել այն: Նույն տարին ընդունվել է նշված մասնագիտության մագիստրատուրան, շարունակել հետազոտությունները և արդյունքները զեկուցել 2014թ. ՀԱՊՀ պրոֆեսորադասախոսական համաժողովին: Զեկույցը գիտական հոդվածի տեսքով նույն թվականին հրատարակվել է համաժողովի

«Լրաբեր» գիտական հոդվածների ժողովածուում (Նաջարյան Մ.Թ., Եղոյան Ա.Մ. «Մայակ 2-01» գազակտրիչի տեխնիկական որակի վերահսկման վիճակագրական մոդելի մշակումը-ՀՊՃՀ, «Լրաբեր» Գիտական հոդվածների ժողովածու, մաս II, 2014թ.): Այնուհետև նույն թեմայի շրջանակներում արդյունքները ամփոփ տեսքով Աննա Եղոյանը ներկայացրել է որպես մագիստրական թեզ:

Հայաստանի Ազգային Ագրարային Համալսարանի կողմից նախագծվել է այգեփոր մեքենա, որը նախատեսված է պտղատու և խաղողի այգիների միջբնային և միջվազային տարածությունների մշակման համար: Այն հնարավորություն է տալիս նշված մշակումները իրականացնել ավելի արդյունավետ, մատչելի և կարճ ժամանակահատվածում, փոխարինելով ձեռքի աշխատանքը:



Այգեփոր մեքենա

Սարքն արտադրելու համար համալսարանը դիմել է Չինվան ՍՊԸ-ին, և գործարանը պատրաստել է սարքի փորձանմուշը և փորձարկել այն :

Արտադրություն սկսելու համար համապատասխան միջոցների ձեռքբերման նպատակով գործարանին աջակցություն է ցուցաբերել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը՝ խորհրդատվություններով և առաջարկություններով:



Գործնական հանդիպումներ Չինվան ՍՊԸ-ում

Ձեռնարկությունը ծագած խնդրների լուծումները գտնելու ակնկալիքով դիմել է նաև ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղին: Այդ նպատակով մասնաճյուղում ստեղծվել է աշխատանքային խումբ:

Աշխատանքային խմբում (ղեկավարտ.գ.թ., դոցենտ Միքայել Նաջարյան) ընդգրկվել են մասնաճյուղի «Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում (մեքենաշինության ճյուղում)» մասնագիտությամբ սովորող երրորդ կուրսի ուսանողուհիներ **Գոհար Դարբինյանը, Աստղիկ Սարգսյանը** և մեկ տարի անց նրանց է միացել արդեն երրորդ կուրսեցի **Էդիտա Հովհաննիսյանը**: Աշխատանքային խմբում ընդգրկվել են նաև Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (Նելսոն Մամուլյան), ՉինՎան ՍՊԸ-ի (Տոմա Կարապետյան), ՀԱԱՀ (Ժուլվենոն Մկրտչյան) աշխատակիցներ:

Խմբի առջև խնդիր է դրվել՝ կատարել շուկայի ուսումնասիրություն, կազմել բիզնես պլան, մշակել ներդրումային ռազմավարության պլան:

Նախատեսվել է կազմել բիզնես փաթեթ և այն տրամադրել ձեռնարկությանը՝ ոլորտում որոշակի գործառույթների իրականացման համար: Թիմն ուսումնասիրել է ձեռնարկության ներդրումային ռազմավարության զարգացման և հնարավոր ներդրումների որոնման խնդիրները, որում իր գործնական օգնությունն է ցուցաբերել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը (Ն.Մամուլյան): Ընդհանուր առմամբ աշխատանքային խումբը փորձել է օգնել ձեռնարկությանը, գտնել այն անհատներին կամ



Աշխատանքային հանդիպում ՎՏԿ-ում

կազմակերպություններին, ովքեր շահագրգռված են ներդրումներ կատարել գյուղատնտեսության ոլորտում, այլ խոսքով անտարբեր չեն մեր երկրի ապագայի նկատմամբ ու ցանկանում են աջակցել տեղական արտադրությանը՝ այդ կերպ խթանելով գյուղատնտեսության զարգացումը:

Վանաձորի մասնաճյուղում ստեղծված աշխատանքային խումբը փորձել է գտնել տարբեր ուղիներ, այդ թվում նաև միջազգային ծրագրեր, օգնել գործարանին կազմակերպել մեքենայի սերիական արտադրությունը և աջակցել մարքեթինգային հետազոտությունների և տեղեկատվության տարածման գործում:

Խմբի կատարած աշխատանքը համագործակցության յուրահատուկ օրինակ է՝ միտված բացահայտելու ու հնարավոր լավագույն տարբերակով լուծելու ձեռնարկության խնդիրները: Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի, Վանաձորի ՉինՎան ՍՊԸ-ի և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի միջև 2015 թ.-ից կա եռակողմ համագործակցություն:



*Ոսանողների մոտ առաջացած խնդիրների պարզաբանումը ՉինՎան ՍՊԸ-ում ՀՊԱՀ-ի
առաջնակարգ մասնագետ, սարքը նախագծող Ժուլվեռն Մկրտչյանի հետ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՎԻՍՏԱՊԵՐՏԱՆԱՑՈՒՄ




Նվիրվում է ՀԱՊՀ
Վանաձորի մասնաճյուղի
ավագ դպրոցի
հիմնադրման 20-ամյակին
1996-2016

**ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎ**

21-22 ապրիլ

ԾՐԱԳԻՐ




Վանաձոր 2016

ԱՌԱՋԻՆ ԼԻՆԳՈՒՄԱՐ ՆԻՍՏ

*Նախագահ՝ տ.գ.թ., դոցենտ Ա.Գ. Խառատյան
ապրիլի 21-ին, ժամը 12:30, Լսարան 3203*

Ողջույնի խոսք *Մասնաճյուղի տնօրեն,
տ.գ.թ., դոց. Ա.Գ. Խառատյան*

1. Մարգարիտա Մարտիրյան (ավագ դպրոցի 12-րդ դաս. աշակերտ)
Ձեռքբերումների երկու տասնամյակ *դեկ. Ա. Փարսադանյան*

**2. Գոհար Դարբինյան, Աստղիկ Մարտիրյան (ակ. Խումբ ՎՁՏ 201Բ),
Էդիտա Հովհաննիսյան (ակ. Խումբ ՎՁՏ 301Բ)**
Վանաձորի ՉԻՆՎԱՆ ՍՊԸ-ի այգեփոր մեքենայի ներդրման
խնդիրները շուկայում *դեկ. տ.գ.թ., դոց. Մ. Նաջարյան
և Մամուկյան, ՏԿ համակարգող*

Թիմի ուսանողները, ղեկավարները բազմիցս եղել են ՉինՎան ՍՊԸ-ում, տեսել արտադրանքը, քննարկումներ են կազմակերպել ձեռնարկության աշխատակիցների ու ագրարային համալսարանի ներկայացուցչի հետ:

Ըստ էության, աշխատանքային խմբի գլխավոր նպատակը ձեռնարկությանն աջակցելն ու գործնական առաջարկություններ անելն է, միտված ընկերության բիզնես հետաքրքրություններին: Սա համագործակցության լավ սկիզբ է, այն կկրի շարունակական բնույթ, որպեսզի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ճարտարագիտական միտքը ներդրվի արտադրության զարգացման համար:

Թիմի կատարած աշխատանքների արդյունքները ուսանողները զեկուցել են Վանաձորի մասնաճյուղի 2016 թվականի ուսանողական գիտական տարեկան գիտաժողովի լիագումար նիստում, որպես թիմային աշխատանքի հաշվետվություն:



Թիմի զեկույցը ՈԻԳ գիտաժողովում 2016թ.

(ուսանողուհիներ Գ.Դարբինյան, Ա.Սարոյան, Է.Հովհաննիսյան)

Կատարած ուսումնասիրությունների որոշակի մաս ներկայացված է ավարտական խմբի երկու ուսանողուհիների Գոհար Դարբինյանի և Աստղիկ Սարոյանի դիպլոմային աշխատանքներում, հետագայում թեման շարունակվել և ձևակերպվել է նաև նրանց մագիստրոսական թեզերում:

2016 թվականին համագործակցությունը ՉինՎան ՍՊԸ-ի հետ շարունակվում է: Առաջանում են նոր գաղափարներ:



***Քննարկումներ դիպլոմային աշխատանքների պաշտպանությունից առաջ
(Գոհար Դարբինյան և Աստղիկ Մարտյան)***

Գյուղատնտեսության մեքենայացումը գյուղատնտեսական արտադրության ճյուղերում ձեռքի և կենդանի քարշող ուժի փոխարինումն է մեքենայացված աշխատանքով, ինչը բարձրացնում է աշխատանքի արտադրողականությունը, իջեցնում արտադրանքի ինքնարժեքը: Այս զարգացումներին ընդառաջ Վանաձորի «ԶԻՆՎԱՆ» ՍՊԸ-ն առաջ է քաշել գաղափար, որի նպատակն է Լոռու մարզում թիրախային 3 շրջաններում հիմնել գյուղտեխնիկայի վարձակալության և սպասարկման կայաններ, որոնք հնարավորություն կտան ֆերմերներին գյուղատնտեսական աշխատանքներն իրականացնել օգտագործելով համապատասխան գյուղտեխնիկա:

Մեքենատրակտորային կայանները նպատակ են հետապնդում տվյալ տարածաշրջանում իրականացնել ինչպես գյուղատնտեսական արտադրության համալիր մեքենայացումը, այնպես էլ գյուղատնտեսական նշանակության տեխնիկական միջոցների սպասարկումը և նորոգումը, լուծելու պահեստամասերի, նավթամթերքի, պարարտանյութերի մատակարարման խնդիրները: Սա հնարավորություն կտա ընդլայնելու ցանքատարացքները, բարձրացնելու արտադրողականությունը, ավելացնելու նոր աշխատատեղեր:

Գաղափարի իրագործման ընթացքում «ԶԻՆՎԱՆ»-ը, հիմք ունենալով ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի հետ անցած տարիների համագործակցության փորձը, առաջարկեց մասնաճյուղին մասնակցելու նախագծի իրականացման աշխատանք-

ներին: Ձևավորվեց աշխատանքային խումբ՝ մասնաճյուղի «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողներից (**Էդիտա Հովհաննիսյան, Անժելա Հովհաննիսյան, Աստղիկ Միքայելյան**) և ընկերության մասնագետներից:

Թիմի կողմից կատարվեցին հարցումներ գյուղատնտեսությամբ զբաղվող մարդկանց շրջանում, պարզելու համար թե մեքենատրակտորային կենտրոնների ստեղծման դեպքում նրանք կօգտվեն արդյոք այդ կայանների ծառայություններից: Իրականացվեց տարբեր տարածաշրջաններում (Սպիտակի, Թումանյանի, Ստեփանավանի-Տաշիրի) մշակաբույսերի տեսակների և մշակվող հողատարածքների մասին անհրաժեշտ տվյալների հավաքագրում:

Ստացված տվյալների հիման վրա խմբի կողմից ընտրված տարածաշրջանների համար, կախված ցանքատարածություններից և մշակաբույսերի առանձնահատկություններից, կատարվել է համապատասխան սարքավորումների ընտրություն, որոնք կնպաստեն գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացմանը և գյուղատնտեսական աշխատանքները կդարձնեն ավելի արդյունավետ:

Մեքենատրակտորային կայանների ստեղծումը կազմակերպելու է «ԶԻՆՎԱՆ» ՍՊԸ-ն, որի արտադրական հնարավորությունները թույլ են տալիս իրականացնելու տրակտորների հավաքում, կցորդիչ սարքավորումների արտադրություն, գյուղտեխնիկայի վերանորոգում: Մասնավորապես քարքարոտ ռելիեֆների այգիների միջբնային տարածությունների մշակման համար ԶԻՆՎԱՆ ՍՊԸ-ն անցյալ տարի իրականացրել է Հայաստանի Ազգային Ագրարային համալսարանի կողմից ներկայացված նախագիծը՝ գործարանում պատրաստվել է սարքի նմուշը և փորձարկվել: Ինչպես վերը նշվեց, նախագծի գործարար ծրագրի կազմման աշխատանքներում ակտիվ մասնակցել են մասնաճյուղի III և IV ուսանողները՝ **Սարգսյան Աստղիկը, Դարբինյան Գոհարը և Հովհաննիսյան Էդիտան**: Կատարված աշխատանքների մասին նրանք զեկուցել են ուսանողական գիտական կոնֆերանսում:

Business Development Support for innovative technology oriented start-ups



EU4Business



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

implemented by
giz
Technische Dienstleistung
für internationale
Kooperationen
Unternehmensberatung GIZ GmbH



Մեքենատրակտորային կայանների ստեղծման նախագիծը ներկայացվել է **«Innovation Matching Grants»** դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ֆինանսավորում ստանալու համար:

«ԶԻՆՎԱՆ» ՍՊԸ-ն Լոռու մարզում կատարել է 200 տնտեսվարողների հարցում:

Ֆերմերների շրջանում իրականացված հարցումները ցույց են տվել, որ միջին հաշվով, մեքենատրակտորային կայանների տեխնիկայի 15-25%-ով ցածր սակագնի կիրառման պարագայում գյուղացիների և ֆերմերային տնտեսությունների 65%-ը հետաքրքրված են գյուղտեխնիկայի շահագործման հեռանկարով: Գրեթե բոլոր տեսակ-

ների՝ հատկապես մինիստրակտորների, առանձին կցորդիչների նկատմամբ առկա է պոտենցիալ պահանջարկի բարձր մակարդակ:

Թիմի կատարած ուսումնասիրությունների արդյունքում որոշվել է յուրաքանչյուր տարածաշրջանի ցանքատարածության համար անհրաժեշտ մեքենասարքավորումների տեսակները և անհրաժեշտ քանակը:

Հավաքագրված լայնածավալ տվյալների հիման վրա աշխատանքային թիմի կողմից կազմվել է բիզնես-պլան, որտեղ հստակ ներկայացված է անհրաժեշտ գյուղատեխնիկայի չափը՝ ըստ համապատասխան կայանների:

Աշխատանքային խմբի կողմից մշակված բիզնես պլանը գտնվում է գյուղնախարարությունում, ինչպես նաև ներկայացվել տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, այն քննարկման փուլում է և առաջիկայում հույս ունենք, որ անհրաժեշտ ֆինանսավորման դեպքում հնարավոր կլինի իրագործել:

Կառավարության կողմից ծրագրի ֆինանսավորման և իրականացման արդյունքում կունենանք՝

1. Լոռու մարզում գյուղատնտեսական արտադրության համալիր մեքենայացում
2. Գյուղատնտեսական մշակաբույսերի արտադրողականության բարձրացում
3. Հիմնավոր նախադրյալներ ընդլայնելու ցանքատարածքները
4. Նոր աշխատատեղերի ստեղծում մեքենատրակտորային կայաններում
5. Արտադրանքի որակի բարձրացում
6. Նշված կայաններում ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի համապատասխան մասնագիտական կրթություն ստացած շրջանավարտների համար մեքենատրակտորային կայաններում աշխատելու հնարավորություն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՎԱՆԱԶՈՐԻ ՄԱՍՆԱԺՅՈՒՂ



Նվիրվում է
Հայրենական
կազմավորման 25-ամյակին
1992-2017

ՈՒՍՏԱՆՈՂԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎ
03-05 մայիս
ԾՐԱԳԻՐ



ԱՌԱՋԻՆ, ԼԻԱԳՈՒՄԱՐՆԱՍ
Նախագահ՝ տ.գ.թ., դրցենտ Ա.Գ. Խառատյան
մայիսի 03 ին՝ ժամը 14:00, խարան 3203
Ողջույնի խոսք

Մասնաճյուղի տնօրեն,
տ.գ.թ., դրցենտ Ա.Գ. Խառատյան

1. «Նախկին Ղազարյան (ակ. խումբ՝ ՎԱԲՀ 611Բ)
Ղաթարաղյան քառքյա պատերազմը, Նոր սերունդ, Նոր
հերոսներ
դեկ.՝ դաս.՝ Վ. Սահակյան
2. Ելիտա Հովհաննիսյան (ակ. խումբ՝ ՎՋՏ 301Դ, Անժելա
Հովհաննիսյան, Աստղիկ Մկրտչյան (ակ. խումբ՝ ՎՋՏ 401Դ)
Լոռու մարզի գյուղատեխնիկայի վարձակալության և
սպասարկման կայանների ստեղծման ծրագիր
դեկ.՝ տ.գ.թ., դրցենտ Մ. Լազարյան
<<ՇՐԵՒԱՆ>> ՄԳԸ-ի գլխավոր տնօրեն
Ս. Լազարյան
3. Մարգարիտա Մարության (ակ. խումբ՝ ՎՓՎ 607Դ)
Նոր մոտեցումներ աղացների մակրոսցող բեռնվածքի
գինամիական պարամետրերի որոշման ուղղությամբ
դեկ.՝ տ.գ.թ., դրցենտ Վ. Բալայան

ԵՐԿՐՈՐԴ ԼԻԱԳՈՒՄԱՐՆԱՍ
Նախագահ՝ տ.գ.թ., դրցենտ Ա.Գ. Խառատյան
մայիսի 10 ին, ժամը 14:15, խարան 3203
Գիտաժողովի արդյունքների ամփոփում
Բաժանմունքների նախագահներ
Գիտաժողովի փակում
Գիտական գծով փոխտնօրեն, տ.գ.թ., դրցենտ Վ.Ա. Բալայան

Վանաձոր 2017

Թիմի կատարած աշխատանքների արդյունքները ուսանողները զեկուցել են Վանաձորի մասնաճյուղի 2017 թ. ուսանողական գիտական տարեկան գիտաժողովի լիազումար նիստում, որպես թիմային աշխատանքի հաշվետվություն:



**Թիմի զեկույցը ՌԻԳ գիտաժողովում 2016թ.
(ուսանողներ Է.Հովհաննիսյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Միքայելյան)**



**Անժելա Հովհաննիսյանը և
Աստղիկ Միքայելյանը
հաջողությամբ պաշտպանել են
ավարտական աշխատանքը և
ստացել գերազանցության դիպլոմ:**

Ավարտական աշխատանք

**Թեմա՝ «ՉԻՆՎԱՆ ձեռնարկության
ծառայությունների հիմնավորումը Լոռու մարզի
ՄՏԿ -ների ստեղծման գործում»**

**ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի ՎՁՏ 401Բ
ակադեմիական խմբի ուսանողուհի՝ Աստղիկ Միքայելյան**

Ղեկավար տ.գ.թ., դոցենտ Միքայել Նաջարյան

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա՝ «Չին Վան» ձեռնարկության արտադրանքի
ներդրումային ծրագրի մշակումը**

**Զեկույցող՝ ՎՁՏ 401Բ ակադեմիական խմբի
ուսանողուհի՝**

Հովհաննիսյան Անժելա

Ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ՝

Միքայել Նաջարյան

Կատարած ուսումնասիրությունների որոշակի հատված ներկայացված է բակալավրի կրթական ծրագրով ավարտական խմբի երկու ուսանողուհիների՝ **Անժելա Հովհաննիսյանի** և **Աստղիկ Միքայելյանի** ավարտական աշխատանքներում:



2017 թ. դեկտեմբերին բակալավրիատի ուսանողներ **Անժելա Հովհաննիսյանը**, **Աստղիկ Միքայելյանը** և մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողուհի **Էդիտա Հովհաննիսյանը** հրատարակում են գիտական հոդված (**Մ.Տ.Նադժարյան, Ջ.Ն.Օգանիսյան, Ա.Ա.Օգանիսյան, Ա.Ա.Միկաելյան** «Программа создания аренды сельхозтехники и станции обслуживания в регионе Лори РА» БЕНИФИЦИАР< журнал об экономических науках, Кемерово, 2017.):



Աշխատանքային հանդիպում Վանաձորի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնում

2017-2018թվականներին ընդլայնվում են համագործակցության շրջանակները Լոռու մարզի Առևտրաարդյունաբերական պալատի, ՉինՎան ՍՊԸ-ի, Վանաձորի համայնքապետարանի զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի (Ն. Մամուլյան) և ՎՏԿ-ի հետ:

Հայաստանը ագրոկենսաբազմազանության կարևոր կենտրոն է համարվում: Ըստ ՀՀ կառավարության գործունեության հրապարակված արդյունքների՝ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները կազմում են բնակչության ընդհանուր թվի 45,6%-ը, ինչը վկայում է այն մասին, որ գյուղատնտեսությունը Հայաստանում նաև սոցիալական մեծ նշանակություն ունի:

Ուստի անհրաժեշտ է մշտապես ժամանակի թելադրանքին համապատասխան նոր ծրագրեր մշակել գյուղատնտեսության զարգացման համար: Որպես գյուղատնտեսության ոլորտը բարելավող միջոց կարելի է դիտարկելագրոտեխնոպարկի ստեղծումը, որը տարածաշրջանում կլինի առաջինը:

Ագրոտեխնոպարկը նպատակահարմար է ստեղծել Լոռու մարզում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները, այդ թվում նաև պոտենցիալ գիտական ներուժի առկայությունը: ՀՀ Լոռու մարզի տարածքային զարգացման տեսլականն է՝ *2025թ. Լոռու մարզը կունենա բազմաճյուղ, զարգացած արդյունաբերություն, արդիականացված գյուղատնտեսություն, ՏՏ ոլորտ և զարգացած զբոսաշրջություն:*

Ագրոտեխնոպարկում ծավալված գործունեության շնորհիվ այս տեսլականը կդառնա առավել քան իրատեսական:

Այսպիսով, նախատեսվում է Լոռու մարզում ստեղծել ագրարային տեխնոպարկ: Վերջինս բազմակողմանի նորարարական կառույց է, որը հանդիսանում է փոքր և միջին ձեռնարկությունների աջակցման օբյեկտ և որի գործունեությունն ուղղված է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացմանը և գյուղատնտեսության ոլորտում ինովացիոն մտքի իրագործմանը:

Լոռու մարզի Առևտրաարդյունաբերական պալատի (նախագահ Սամվել Նաջարյան) կողմից առաջ քաշված այս գաղափարի իրականացմանը ակտիվ մասնակցություն ունեն նաև ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի բարձր կուրսերի ուսանողները: Նախորդ տարիների համագործակցության հաջողված փորձը հիմք է տալիս եզրակացնելու, որ ունակ ուսանողների մասնակցությունը նախագծի իրականացմանը կարևոր նշանակություն կարող է ունենալ:

Թիմի կատարած աշխատանքի արդյունքների հիման վրա կազմվել է ագրոտեխնոպարկի կառուցվածքը առանձին մոդուլներով: Ստեղծվող ագրոտեխնոպարկն իր մեջ ներառելու է հետևյալ մոդուլները.

1. Գյուղատնտեսական մեքենաշինական գործարան (ներկայացված է որպես առանձին ներդրումային ծրագիր)
2. Մեքենատրակտորային կայաններ (այսուհետ ՄՏԿ), ներկայացված է որպես առանձին ներդրումային ծրագիր, որում ավելի վաղ մասնակցել են մասնաճյուղի

ուսանողուհիներ **Էդիտա Հովհաննիսյանը, Անժելա Հովհաննիսյանը և Աստղիկ Միքայելյանը**)

3. Ուսումնահետազոտական կենտրոն

4. Տրակտորների հավաքման և տրակտորների համար կցորդիչ սարքավորումների պատրաստման արտադրամաս

5. Ջերմոցային տնտեսություն

6. Ձկնաբուծություն

7. Անասնապահություն և խտացված անասնակերի արտադրություն

8. Թռչնաֆաբրիկա:

Ագրարային տեխնոպարկի ստեղծման արդյունքում հնարավոր կդառնա ներքին շուկայում գյուղմթերքի պահանջարկն ապահովել տեղական արտադրության, էկոլոգիապես մաքուր արտադրանքով, միաժամանակ ավելացնելով գյուղմթերքի արտահանման ծավալները:

Առանձնահատուկ նշանակություն ունի ագրոտեխնոպարկի ուսումնահետազոտական կենտրոնը: Գրագետ և աշխատանքային նրբություններին տիրապետող և համապատասխան հմտություններով ֆերմերների պատրաստումը (վերապատրաստումը) կնպաստի առկա ռեսուրսների ճիշտ բաշխմանը և օգտագործմանը, որի արդյունքում կբարձրանա ինչպես ակնկալվող արտադրանքի քանակը և որակը, այնպես էլ ֆերմերի եկամուտը: Գիտական հետազոտություններն էլ նոր հնարավորություններ կստեղծեն գյուղատնտեսության արդիականացման համար:



Ագրարային տեխնոպարկի ստեղծումից, ապրանքների արտադրումից և նրա մատուցած ծառայություններից հետո Լոռու մարզի սոցիալ-տնտեսական ոլորտը զգալիորեն կփոխվի դեպի լավը:

Ագրոտեխնոպարկի նախագծի նախնական տարբերակը, որի համահեղինակներից են ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի «Տնտեսագիտություն» մասնագիտության բակալավրի, մագիստրատուրայի տարբեր կուրսերի ուսանողներ **(Էդիտա Հովհաննիսյան, Անժելա Հովհաննիսյան, Աստղիկ Առաքելյան)**, ներկայացված է ՀՀ կառավարություն՝ պետական աջակցություն ստանալու համար:

Թիմի անդամները մասնակցում են ՎՏԿ-ում կազմակերպված Եվրոպական երկրներ արտահանման գործիքների, ինչպես նաև օժանդակ ծրագրերի և գործիքների վերաբերյալ տեղեկատվական սեմինարին

Միաժամանակ աշխատանքային խումբը փորձում է նախագծի իրականացման համար ներգրավել ներդրողներ ինչպես մեր երկրից, այպես էլ արտասահմանից:

Հուսանք, որ նախագծի ֆինանսավորման դեպքում Վանաձորում հիմնված ագրարային տեխնոպարկը էական փոփոխություն կբերի ողջ տարածաշրջանին, որի մեջ մեծ ներդրում կունենան մասնաճյուղի ուսանողները:

Շարադրանքից ակնհայտ է, որ թիմային աշխատանքում մասնակցում են մասնաճյուղի «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ սովորող տարբեր կուրսի ուսանողները, որոնք ներգրավված են տնտեսական խնդիրների լուծման աշխատանքներին: Անհրաժեշտ է ընդգծել նաև արդեն թիմային աշխատանքի փորձ ունեցող բարձր կուրսի ուսանողների աջակցությունը ցածր կուրսեցիներին:

Թիմի ձեռքբերումներից են նաև տարբեր միջոցառումներին, համաժողով-ցուցահանդեսներին մասնակցությունը:

Նշված ժամանակահատվածում ուսանողների թիմային աշխատանքի արդյունքները ցույց են տալիս, որ դրա արդյունավետությունը բավականին բարձր է՝ որակյալ և ըստ նշանակության մասնագետի պատրաստման, համագործակցության ընդլայնման հնարավորությունների, ուսանողների տեսական, գիտական և հատկապես գործնական գիտելիքների կուտակման հնարավորությունների, տարբեր կուրսերի ուսանողների համախմբման, փոխօգնության, թիմի ներսում և դրանից դուրս գիտելիքների փոխանակման, անձնական հրաշալի փոխհարաբերությունների առումով:

Այս ամենը անշուշտ նպաստում են վաղվա անհատի ձևավորմանը:

- ❖ *Ներկայացված աշխատանքները համագործակցության յուրահատուկ օրինակ է՝ միտված բացահայտելու ու հնարավոր լավագույն տարբերակով լուծելու ձեռնարկության խնդիրները:*
- ❖ *Համագործակցությունը տնտեսվարողների հետ կկրի շարունակական բնույթ, որպեսզի Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Վանաձորի մասնաճյուղի ճարտարագիտական միտքը ներդրվի արտադրության զարգացման համար:*

ՀԱՊՀ Վանաձորի մասնաճյուղի
ՌԻՄ Բաժնի վարիչ տ.գ.թ., դոցենտ

Միքայել Նաջարյան

Սեպտեմբեր, 2018թ.